

Ծանոթագրություն 1.

Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

Բանկի հիմնական գործունեությունը

«ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ը հանդիսանում է «Միջազգային Ինվեստիցիոն Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդը, որը 25.10.1991թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացել է բանկային գործունեություն իրականացնելու թիվ 31 լիցենզիան: Բանկը ընդունում է ավանդներ, տրամադրում է վարկեր, մատուցում է հաճախորդներին բանկային ծառայություններ: Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմում է 168 մարդ:

Բանկի գլխավոր գրասենյակը և 4 մասնաճյուղերը գտնվում են Երևան քաղաքում, իսկ 1 մասնաճյուղ Գյումրի քաղաքում: Բանկի իրավաբանական հասցեն է ՀՀ ք.Երևան 375002, Վարդանանց փ.13:

Գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա այստեղ բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալած գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները փոքր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլինի ակտիվ շուկայի դեպքում, միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դաժնալու արդյունքում: Նման ճշտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշտումները ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Խորհրդի կառուցվածքը, կազմը

Խորհրդի նախագահ՝

Յուրբաշև Մ.Մ.

Խորհրդի անդամներ՝

Վարազյան Դ.Ն.
Կուսիանով Ս.Ա.
Տկաչուկ Օ.Գ.
Բարխուդարյան Լ. Վ.
Սաֆարյան Ա.Ա.
Սողոզենկո Ռ.Վ.

Վարչության կառուցվածքը, կազմը

Վարչության նախագահ՝

Ն. Բակբերգենով

Գործադիր տնօրեն

Վարչության անդամներ՝

Ա. Իոսիֆյան
Տ. Գալստյան

Գործադիր տնօրենի տեղակալ
Գլխավոր հաշվապահ

Սեփականության կառուցվածքը

Փակ բաժնետիրական ընկերություն, մասնակիցների քանակը՝ 4 (չորս):

Նշանակալից մասնակիցների անունները

«ԲՏԱ ԲԱՆԿ» ԲԸ
«Մոբիլեքս Էներջի» ՍՊԸ
«ԶՈՒ Բետեխիլնգունգ» ԱԳ
«Փի Էս Սի Էմ Կա Ինվեստ» ՍՊԸ

Ծանոթագրություն 2

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Բանկի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Հավելվածությունները կազմվել են՝ պահպանելով անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համարելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է բանկերի համար նախատեսված հաշվային պլանով, հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 06.08.02թ. թիվ 258 Ն որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 27.08.02թ. թիվ 629 Ն հրամանով:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում ՀՀ դրամը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսային մեթոդը: Տոկոսային եկամուտները ներառում են նաև տոկոսային եկամուտներ ներդրումային արժեթղթերից: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ: Երբ վարկերը և այլ փոխառությունները դառնում են կասկածելի և վերաձևակերպվում են իրենց փոխհատուցվող գումարների չափով, տոկոսային եկամուտը շարունակվում է ճանաչվել այն արդյունավետ տոկոսադրույքով, ինչով զեղջվել են ապագա դրամական հոսքերը վարկի փոխհատուցվող գումարը ստանալու նպատակով:

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը,

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների հաշվառման և վերագնահատման համար հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող միջին հաշվարկային փոխարժեքը:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության՝ արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ հողվածում: Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության արտարժույթային գործարքներից զուտ եկամուտ հողվածում:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված),

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերություններ: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմանվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույթի վրա: Բանկը իր գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռքբերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների: Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

Դրամական հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են.

1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Կանխիկ դրամ բանկոմատում
3. Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր
4. Թղթակցային հաշիվներ
5. Դեպոզիտային միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ

Այս կոտեգորիայում հաշվառվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Ամանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարբային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Բանկն ընտրել է ՀՀՀՄ 39-ի այն մոտեցումը, ըստ որի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում:

Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («հակադարձ ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնության, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով արժեթղթերի գնումը («ռեպո») հաշվառվում է պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդների տրված վարկեր և փոխատվություններ հաշիվներում:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը բերորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության առևտրային արժեթղթերից գուտ շահույթ/վնաս հոդվածում:

Վարկեր և փոխառություններ՝ բանկերին, հաճախորդներին

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարբեր վաճառելու մտադրության:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի վարկերի և այլ փոխատվությունների դուրսգրման հիմունքները

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Դուրս գրումն իրականացվում է համապատասխան գործընթացներից և կորուստների մեծությունը որոշելուց հետո: Նախկինում դուրս գրված գումարների հակադարձումն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստների հաշիվները:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների էական գումարի վաճառք , ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» բաժնում ընդգրկված ակտիվների սկզբնական գրանցումը կատարվում է ձեռքբերման արժեքով (անվանական արժեքին գումարած հավելավճար կամ համաձայն գեղչառկան), իսկ այնուհետև ամորտիզացված արժեքով: Սկզբնական գրանցման ժամանակ մինչև ձեռք բերումը ակտիվի գծով կուտակված և չվճարված տոկոսների գումարով Բանկը դեբետագրում է ստացվելիք տոկոսների հաշիվները: Ձեղչատոկոսի գումարը դուրս է գրվում եկամուտների հաշվին, իսկ հավելավճարին՝ եկամուտների հաշվից՝ օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Եթե բանկը այս կարգի ակտիվները վերադասակարգում է որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ, ապա գրանցումը կատարվում է դրանց տվյալ օրվա իրական գնի համաձայն: Այն դեպքում երբ ներդրումները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար ակտիվներ, ապա գնման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը ձևակերպվում է եկամուտների կամ ծախսերի համապատասխան հաշիվներով:

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվները

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով այն ամփոփապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, 2008թ. 4-րդ եռամսյակում և 2007թ. կիրառվել են հետևյալ ծառայության ժամկետները՝

	2008	2007
--	------	------

Շենքեր	50	20
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	4
Տրանսպորտային միջոցներ	10	5
Այլ հիմնական միջոցներ	10	5-8

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում են և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալական պայմանագրի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս էդրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավասանվում է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մավածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ:

Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Բանկերի և հաճախորդների միջոցները

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը:

Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը

Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերը հաշվեկշռում գրանցվում են իրենց անվանական արժեքով: Եթե արժեթուղթը վաճառվել է զեղչատոկոսով կամ հավելավճարով, ապա վաճառքի գնի ու անվանական արժեքի տարբերության գումարները գրանցվում են, համապատասխանաբար՝ «Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» կամ «Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» հաշիվներում:

Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Բաժնետիրական կապիտալ – Մովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես բաժնետիրական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Շահաբաժիններ – Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Բանկում փոխարժեքները սահմանվում են Դիլինգային գործառնությունների բաժնի կողմից, որը ամեն աշխատանային օր սահմանում է կանխիկ և անկանխիկ արտարժույթների գնման և վաճառքի փոխարժեքները, հաշվին թղթադրամների մուտքագրման և կանխիկացման տոկոսները:

Փոխանակման փոխարժեքները սահմանվում են հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

- ա) ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքների մեծությունը,
- բ) ՀՀ միջբանկային շուկայում ձևավորված փոխարժեքների մեծությունը,
- գ) ՀՀ տարածքում ձևավորված փոխարժեքների մեծությունը,
- դ) Միջազգային արտարժույթային շուկաներում փոխարժեքների գնանշումները,
- ե) Արտարժույթի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը՝ ՀՀ տարածքում,
- զ) Այլ գործոններ (ֆորս-մաժորային պայմաններ, շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, այլ սուբյեկտիվ գործոններ):

Ծանոթագրություն 34

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի վերաբերյալ ներկայացվող բացահայտումները կատարվում են ՀՀՀՀՄ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» պահանջների համաձայն: Ֆինանսական գործիքների իրական արժեքն այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել՝ իրազեկ և պարտատակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքի ընթացքում: Քանի որ բանկի ֆինանսական գործիքների մեծամասնության համար գործող շուկա գոյություն չունի, իրական արժեքի գնահատումն իրականացվում է դատողությունների հիման վրա՝ ելնելով ընթացիկ տնտեսական իրավիճակից և գործիքին հատուկ ռիսկերից:

Կարճաժամկետ մարման պայման ունեցող այնպիսի ֆինանսական գործիքների, ինչպիսիք են կանխիկ դրամական միջոցները, մնացորդները ՀՀ ԿԲ-ում, այլ բանկերի և հաճախորդների նկատմամբ պահանջները և պարտավորությունները, հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Երկարաժամկետ մարման պայման ունեցող ֆինանսական գործիքների գծով կիրառվող տոկոսադրույթները հիմնված են շուկայական տոկոսադրույթների վրա և հետևաբար դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարկային պորտֆելի իրական արժեքը կախված է պորտֆելի յուրաքանչյուր դասի շրջանակներում առանձին վարկի վարկային և տոկոսադրույթային առանձնահատկություններից: Վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գնահատումը

հաշվի է առնում վարկերի տարբեր դասերին բնորոշ ռիսկերն, ինչը հիմնված է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են տնտեսական այն ճյուղի իրավիճակը, որտեղ գործում է յուրաքանչյուր փոխառում, յուրաքանչյուր փոխառուի տնտեսական իրավիճակը և ձեռք բերված երաշխիքները: Հետևաբար վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդը այն զեղչի ճշգրիտ գնահատականն է, որն արտացոլում է վարկային ռիսկի ազդեցությունը:

Չգնանշվող արժեթղթերը ներկայացված են ինքնարժեքով՝ ճշգրտված տևական արժեքկման գումարով:

Ծանոթագրություն 36 **Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում**

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

1. Ծերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
2. Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, և
3. Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և եկամուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելը առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններում օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մտնելու ժամկետը: Փոխառուի փոխատուի միջև պարբային գործիքների փոխանակումը, որոնց պայամաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարբի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ծանոթագրություն 3

Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ

(հազար դրամ)

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	26,245	8,383
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	657,889	484,033
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	19,547	19,046
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	16,315	7,063
Տոկոսային եկամուտներ արժույթային սվոպից	301	-
Այլ տոկոսային եկամուտ	124	-
Ընդամենը	720,420	518,525
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից մերգրաված ավանդների և վարկերի դիմաց	174,700	205,723
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	16,038	91,614
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	-	178
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	12,864	1,905
Այլ տոկոսային ծախսեր	-	4,007
Ընդամենը	203,602	303,425
Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	516,818	215,100

Ծանոթագրություն 4

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Դրամարկղային գործառնություններից	3,361	8,258
Հաշվարկային ծառայություններից	8,680	10,027
Երաշխիքներից, հոծաբազրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	40	1,698
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	-	-
Վճարային քարտերից	2,057	1,706
Այլ կոմիսիոն վճարներ	4,622	7,232
Ընդամենը	18,760	28,921
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	1,705	1,945
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	4,410	581
Երաշխիքների, հոծաբազրերով, ակրեդիտիվներով գործառնությունների, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	-	-
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	4,333	4,105
Այլ կոմիսիոն վճարներ*	2,084	1,500
Ընդամենը	12,533	8,132
Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	6,227	20,789

Ծանոթագրություն 5

Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից

Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից գուտ եկամուտ, այդ թվում՝ <i>բաժնետոմսերից</i>	9,526	-
<i>պարտքային արժեթղթերից</i>	9,526	-
<i>աժանցյալներից</i>	-	-
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից գուտ	(9,255)	-
Ընդամենը	271	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներից	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից գուտ եկամուտ, այդ թվում՝ <i>բաժնետոմսերից</i>	-	22,271
<i>պարտքային արժեթղթերից</i>	-	-
<i>աժանցյալներից</i>	-	22,271
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից գուտ եկամուտ	(3,813)	(37,960)
Ընդամենը	(3,813)	(15,690)
Արտարժույթային գործառնություններից	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	251,434	38,694
Արտարժույթի վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	(27,280)	17,771
Ընդամենը	224,154	56,464
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշադրամներից	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	-	-
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 6

Այլ գործառնական եկամուտ

Այլ գործառնական եկամուտ	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	30,042	15,343
Ֆակտորինգից ստացված եկամուտներ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	1,407	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ		
Արտասովոր եկամուտներ (առկայության դեպքում)*		
Այլ եկամուտներ**	602	4,928
Ընդամենը	32,051	20,271

Ծանոթագրություն 7

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ

Կանխիկին հավասարեցված վճարային փստաթղթերի գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	6
Պահուստին կատարված մասհանումներ	13	3.7
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		0.5
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		3
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
Պահուստի օգտագործում		0
Վերջնական մնացորդ	6.5	7
Բանկերի նկատմամբ պահանջների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	1,666
Պահուստին կատարված մասհանումներ	14	41,716
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		4,095
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		37,622
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
Պահուստի օգտագործում		(2,926)
Վերջնական մնացորդ	39,287	1,793
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	46,026
Պահուստին կատարված մասհանումներ	14	60314
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		106411
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(46,097)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		36,900
Պահուստի օգտագործում		36,829
Վերջնական մնացորդ	0	2,255
Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	1,648,129
Պահուստին կատարված մասհանումներ	16	2,232,878
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		3,754,910
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(1,522,032)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		3,565,685
Պահուստի օգտագործում		3,497,239
Վերջնական մնացորդ	194,543	143,736
Ներդրումների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	-
Պահուստին կատարված մասհանումներ	18	18,587
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		18,587
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
Պահուստի օգտագործում		
Վերջնական մնացորդ	18,587	271
Այլ ակտիվների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	846
Պահուստին կատարված մասհանումներ	22	16625
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		1421
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		15,203
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		130
Պահուստի օգտագործում		13,950
Վերջնական մնացորդ	2,230	1,484
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ակզբնական մնացորդ	<i>Ծանոթ.</i>	6,893
Պահուստին կատարված մասհանումներ	30	7,209
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		11,616
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(4,408)
Վերջնական մնացորդ		2,486
Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին	(1,501,125)	(10,452)

Ծանոթագրություն 8

«Ընդհանուր վարչական ծախսեր»

Ընդհանուր վարչական ծախսեր	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	121,221	111,263
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	11,088	10,537
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	271	283
Գործողման ծախսեր	2,473	4,675
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	69,180	49,142
Ապահովագրության ծախսեր	76	
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	5,365	5,576
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	5,302	4,637
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	17,190	2,100
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	7,727	8,571
Տրանսպորտային ծախսեր	1,587	2,497
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	18,927	16,582
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	8,023	5,392
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	-	-
Այլ վարչական ծախսեր**	-	183
Ընդամենը	268,430	221,438

	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Աշխատակիցների միջին թվաքանակը	152	118
Մեկ աշխատողին ընկնող միջին ամսական աշխատավարձը	232	282

Ծանոթագրություն 9

Այլ գործառնական ծախսեր

Այլ գործառնական ծախսեր	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Վճարված տուգանքներ և տույժեր	-	10,166
Ինկասացիայի համար կատարված վճարումներ		
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	21,490	17,272
Ֆակտորինգի գծով ծախսեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	11,473	15,653
Կորուստներ նյութական ակտիվների արժեզրկումից		
Արտասովոր ծախսեր (առկայության դեպքում)		
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	(526)	333
Այլ ծախսեր	1,179,697	15,708
Ընդամենը	1,212,134	59,131

Ծանոթագրություն 10

Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

Բանկը չունի վերահսկվող միավորներում ներդրումներից ստացած զուտ շահույթ/վնաս:

Ծանոթագրություն 11

Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Շահութահարկի գծով ծախս	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները		
Հետաձգված հարկի գծով ծախս	(10,038)	
Ընդամենը	(10,038)	-

Ծանոթագրություն 12

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01.10.2008- 31.12.2008	01.10.2007- 31.12.2007
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո		
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ		
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ		
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ		
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 13

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	31.12.2008	31.12.2007
Կանխիկ դրամական միջոցներ	183,469	360,133
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	74,646	63,191
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	1,020,325	1,259,257
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում		0
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	20,248	17,978
Հաշվեցրված տոկոսներ		0
Ընդամենը	1,298,688	1,700,559

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառվում են դրամական հոսքերի մասին հաշվետվությունում

	31.12.2008	31.12.2007
Կանխիկ դրամական միջոցներ	183,469	360,133
Կանխիկ դրամ քանկումատում	74,002	62,538
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	650	660
Թղթակցային հաշիվներ	4,907,843	1,429,576
Դեպոնացված միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	20,248	17,978
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառված են դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	5,186,212	1,870,885

Ծանոթագրություն 14

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	31.12.2008	31.12.2007
ՀՀ բանկերում	20,731	5,639
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում	65,358	92,475
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում	3,801,429	72,205
Հաշվեցրված տոկոսներ	5	10
Ընդամենը	3,887,523	170,329

Միջբանկային վարկեր և ավանդներ, այլ պահանջներ

ՀՀ բանկերում*	31.12.2008	31.12.2007
վարկեր և ավանդներ		
ֆակտորինգ		
ֆինանսական լիզինգ		
ռեպո (հետգնման) պայմանագրեր		
ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ		
այլ	215,607	1,641,735
Ընդամենը	215,607	1,641,735

ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում

վարկեր և ավանդներ		
ֆակտորինգ		
ֆինանսական լիզինգ		
ռեպո (հետգնման) պայմանագրեր		
ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ		
այլ	41,184	
Ընդամենը	41,184	-

Միջբանկային վարկերի և ավանդների, այլ պահանջների գծով հաշվեգրված տոկոսներ և ստացվելիք գումարներ

	89	-
Ընդամենը	4,144,403	1,812,064

Բանկերի նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)

	(39,287)	(1,792)
Չուտ պահանջներ բանկերի նկատմամբ	4,105,116	1,810,271

Ֆինանսական կազմակերպություններում վարկեր և ավանդներ, այլ պահանջներ

ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններում*	31.12.2008	31.12.2007
վարկեր և ավանդներ		225,504
ֆակտորինգ		
ֆինանսական լիզինգ		
ռեպո (հետգնման) պայմանագրեր	421,401	222,875
ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ		
այլ		
Ընդամենը	421,401	448,379

Ֆինանսական կազմակերպություններում վարկերի և ավանդների, այլ պահանջների գծով հաշվեգրված տոկոսներ և ստացվելիք վճարներ

	206	2,915
ԸՆԴԱՄԵՆԸ	421,607	451,294

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)

		(2,255)
Չուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	421,607	449,039

Չուտ պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	4,526,723	2,259,310
--	-----------	-----------

Ծանոթագրություն 15

«Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ»

Բանկը առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 16

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Տրված վարկեր և այլ փոխատվություններ	31.12.2008	31.12.2007
Վարկեր, այդ թվում՝	5,529,982	11,921,805
<i>հիփոթեքային</i>	1,249,772	1,511,436
Օվերդրաֆտ	48,658	142,801
Վարկային քարտեր		

Այլ		
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	42,376	96,148
Ընդամենը վարկեր	5,621,016	12,160,754
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(194,543)	(143,736)
Ընդամենը զուտ վարկեր	5,426,473	12,017,018

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում արժեզրկված (չաշխատող) վարկերի և փոխառությունների կառուցվածքը

	31.12.2008		31.12.2007	
	գումարը	քանակը	գումարը	քանակը
Վարկեր և փոխառություններ,	5,578,640	3919	12,290,110	2041
որից արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխառություններ,	537,041	229	139,293	23
այդ թվում՝ ժամկետանց	114,189	196	12,405	15
Ընդամենը վարկեր	5,041,599	3,919	12,150,817	2,041
Հարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(194,543)		(145,991)	
Ընդամենը զուտ վարկեր	4,847,056		12,004,826	

Այս ծանոթագրությունում ներկայացված է բանկի վարկային պորտֆելը՝ առանց հաշվեգրված տոկոսները հաշվի առնելու

Վարկային պորտֆելի վերլուծությունը ըստ ապահովվածության	31.12.2008	31.12.2007
Անշարժ գույք	3,087,450	8,419,784
Պաշարներ	269,379	3,544,205
Այլ կազմակերպությունների բաժնետոմսեր		
Մարքավորումներ	178,359	
Կանխիկ և այլ երաշխիքներ	4,502	56,187
Թանկարժեք մետաղներ	112,929	126,575
Այլ	1,926,021	143,359
Հաշվեգրված տոկոսներ	42,376	98,772
Ընդամենը	5,621,016	12,388,882
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(194,543)	(145,991)
Ընդամենը վարկեր	5,426,473	12,242,891

Այս ծանոթագրությունում ներկայացված է բանկի վարկային պորտֆելը հաշվի առնելով հաշվեգրված տոկոսները և հնարավոր կորուստների պահուստը

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների	31.12.2008	31.12.2007
Բանկեր		-
Ֆինանսական կազմակերպություններ		225,504
Պետական ձեռնարկություններ		
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝	1,785,865	8,849,181
խոշոր ձեռնարկություններ	1,047,723	7,745,248
փոքր և միջին ձեռնարկություններ*	738,142	1,103,932
Ֆիզիկական անձինք, այդ թվում՝	3,578,222	2,929,157
սպառողական վարկեր	2,328,450	1,417,721
հիփոթեքային վարկեր	1,249,772	1,511,436
վարկային քարտեր	-	-
Անհատ ձեռնարկատերեր	214,553	286,268
Հաշվեգրված տոկոսներ	42,376	98,772
Ընդամենը վարկեր	5,621,016	12,388,882
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(194,543)	(145,991)
Ընդամենը զուտ վարկեր	5,426,473	12,242,891

Այս ծանոթագրությունում ներկայացված է բանկի վարկային պորտֆելը հաշվի առնելով հաշվեգրված տոկոսները և հնարավոր կորուստների պահուստը

Խոշոր վարկատուներին և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկեր	31.12.2008	31.12.2007
Ընդհանուր գումարը	1,229,940	6,053,071
Տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում (վարկային պորտֆելի ո %-ը)	22.84	49.84
Ընդհանուր կապիտալ (ներմատիվային)	2,417,795	5,317,530
Տոկոսային հարաբերակցությունը կապիտալի նկատմամբ (կապիտալի ո %-ը)	50.87	113.83

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ վարկավորման ոլորտների	31.12.2008	Տոկոսային հարաբեր-ությունը	31.12.2007	Տոկոսային հարաբեր-ությունը
Արդյունաբերություն	454,755	0.1	641,013	0.1
Գյուղատնտեսություն	41,255	0.0	28,958	0.0
Շինարարություն	5,567	0.0	711,521	0.1
Տրանսպորտ և կապ	162,523	0.0	292,353	0.0
Առևտուր	907,213	0.2	6,138,962	0.5
Ֆինանսական	-	-	288,180	0.0
Սպառողական	2,328,381	0.4	1,417,721	0.1
Հիփոթեքային վարկեր	1,249,772	0.2	1,511,436	0.1
Հանրային սնունդ և սպասարկման ոլորտներ	392,902	0.1	914,695	0.1
Այլ	36,272	0.0	345,271	0.0
Հաշվեգրված տոկոսներ	42,376	0.0	98,772	0.0
Ընդամենը	5,621,016		12,388,882	

Այս ծանոթագրությունում ներկայացված է բանկի վարկային պորտֆելը՝ առանց հնարավոր կորուստների պահուստը հաշվի առնելով

Հաճախորդների ռեզիդենտության առումով վարկային պորտֆելի վերլուծությունը	31.12.2008	Տոկոսային հարաբեր-ությունը	31.12.2007	Տոկոսային հարաբեր-ությունը
ՀՀ ռեզիդենտներ	5,572,245	1.0	12,276,304	1.0
ԲաձՅ/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ*				
ԲԲԲ/-ԲաձՅ/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ*	6,395	0.0	13,806	0.0
Ռուսաստան	5,395		6,359	

	Ղազախստան	1,000		6,847	
	Վրաստան			600	
	Հաշվեգրված տոկոսներ	42,376		98,772	
	Ընդամենը	5,621,016		12,388,882	

Այս ծանոթագրությունում ներկայացված է բանկի վարկային պորտֆելը առանց հնարավոր կորուստերի պահուստը հաշվի առնելով

Ծանոթագրություն 17.

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	31.12.2008	31.12.2007
ՀՀ պետական արժեթղթեր		
գանձապետական պարտատոմսեր	1,132,133	682,071
կենտրոնական բանկի պարտատոմսեր	99,642	346,862
այլ		
Ընդամենը	1,231,775	1,028,933
Ընդամենը պետական արժեթղթեր	1,231,775	1,028,933

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	31.12.2008	31.12.2007
ԲԲԲ+/Քաս 1/ և ցածր վարկամիջ ունեցող, այլ վարկամիջ ունեցող և վարկամիջ չունեցող թողարկողի	ցուցակված	չցուցակված
երկարաժամկետ պարտքային գործիքներ		
կարճաժամկետ պարտքային գործիքներ		
ավանդային հավաստագրեր		
կապիտալի գործիքներ	31,718	31,718
այլ		
Ընդամենը	31,718	-
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	31,718	0

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	31.12.2008	31.12.2007
ԲԲԲ+/Քաս 1/ և ցածր վարկամիջ ունեցող, այլ վարկամիջ ունեցող և վարկամիջ չունեցող թողարկողի	ցուցակված	չցուցակված
երկարաժամկետ պարտքային գործիքներ		
կարճաժամկետ պարտքային գործիքներ		
ավանդային հավաստագրեր		
կապիտալի գործիքներ	1,158	1,413
այլ		
Ընդամենը	1,158	-
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	1,158	0
<i>Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ</i>	<i>(18,587)</i>	<i>(271)</i>
Ընդամենը վաճառքի համար մատչելի արժեթղթեր	1,246,064	1,061,793

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը	Տես. կշիռը տվ. կազմ. կանոնադր. կապիտալում	Ընդհ. ներդր.-ի մեջ տվ. կազմ.-ի մեջ ներդրում-ների տես. կշիռը
				(հազ. դրամ)	(%)	(%)
SWIFT SCRL	Վճարահաշվարկային	Ընկերություն	10/08/05	1158	0%	3.52 %
ԱՐՄԵՆԻԱՆ ԶԱՐԿ ՓԲԸ	Հաշվարկային	Հայաստան	11/04/06	12143	2%	36.94%
«ԱԼՔՈՒ Քրեդիտ Ռեֆորմինգ» ՓԲԸ	Տեղեկատվական	Հայաստան	27/11/07	19575	3.68%	59.54%
Ընդամենը				32,876		

Ծանոթագրություն 18.

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Բանկի չունի մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ծանոթագրություն 19.

Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում

Բանկը ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում չունի:

Ծանոթագրություն 21.

Հետաձգված հարկային ակտիվներ

	31.12.2008	31.12.2007
Հետաձգված հարկային ակտիվներ	10,038	0
Ընդամենը	10,038	-

Ծանոթագրություն 22.

Այլ ակտիվներ

Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	31.12.2008	31.12.2007
Ստացվելիք շահաբաժիններ		
Հավաստագր. կառավարման գործառն. գծով ստացվելիք գումարներ		
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	6,208	32,582
Ընդամենը	6,208	32,582
<i>Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստերի պահուստ (ծանոթ. 7)</i>	<i>(503)</i>	<i>(326)</i>
«Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	5,705	32,256
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	31.12.2008	31.12.2007
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		
Դեբիտորական պարտքեր մատակարարների գծով	1,300	
Կանխավճարներ աշխատակիցներին		
Կանխավճարներ մատակարարներին	21,288	4,255

Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ավանդակազրկության	44,185	143,665
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	-	-
Ընդամենը	66,773	147,920
<i>Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)</i>	<i>(473)</i>	<i>(1,118)</i>
Ընդամենը զուտ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	66,300	146,803
